

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՍԿԻՉ-ՂՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 26-Ի N 1325-Ն ՈՒ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-Ի N 946-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻՆ ՈՒՔԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1 օգոստոսի 2013 թ.
N 846-Ն

«Հսկիչ-ղրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 6-րդ հոդվածներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել՝

1) հսկիչ-ղրամարկղային մեքենաներին ներկայացվող տեխնիկական պահանջները՝ համաձայն N 1 հավելվածի.

2) հսկիչ-ղրամարկղային մեքենաների կիրառման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) սույն որոշման 1-ին կետով հաստատվող պահանջները և կարգը կիրառվում են «Հսկիչ-ղրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի «դ» կետի համաձայն 2013 թվականի հունիսի 1-ից կիրառվող հսկիչ-ղրամարկղային մեքենաների նկատմամբ.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված հսկիչ-ղրամարկղային մեքենաներ կիրառող՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կազմակերպությունների, դրանց առանձնացված ստորաբաժանումների (մասնաճյուղերի, ներկայացուցչությունների), անհատ ձեռնարկատերերի, նոտարների, փաստաբանական գործունեություն իրականացնողների (այսուհետ՝ ՀՂՄ կիրառողներ) նկատմամբ կիրառելի չեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 26-ի «Հսկիչ-ղրամարկղային մեքենաների շահագործման կանոնները հաստատելու մասին» N 1325-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 1-ի «Հսկիչ-ղրամարկղային մեքենաներին և դրանց շահագործման համար օգտագործվող ժապավեններին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» N 946-Ն որոշումների դրույթները:

3. 2015 թվականի հունվարի 1-ից ուժը կորցրած ճանաչել՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 26-ի «Հսկիչ-ղրամարկղային մեքենաների շահագործման կանոնները հաստատելու մասին» N 1325-Ն որոշումը.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 1-ի «Հսկիչ-ղրամարկղային մեքենաներին և դրանց շահագործման համար օգտագործվող ժապավեններին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» N 946-Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2013 թվականի հունիսի 1-ից հետո ծագող հարաբերությունների վրա:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

S. Սարգսյան

9 օգոստոսի 2013 թ.
Երևան

**ՀՍԿԻԶ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՊԱՀԱՆՁՆԵՐԸ**

1. Հայաստանի Հանրապետությունում կիրառվող հսկիչ-դրամարկղային մեքենաները (այսուհետ՝ ՀՂՄ) պետք է բավարարեն սույն հավելվածով սահմանված՝ ՀՂՄ-ների ներկայացվող տեխնիկական պահանջները (այսուհետ՝ պահանջներ):

2. Սույն պահանջներում կիրառվում են հետևյալ հասկացությունները՝

1) **ՀՂՄ-ի ֆիսկալային հիշողություն**՝ երկարատև հիշող սարք, որը ՀՂՄ-ի բաղկացուցիչ մասն է և նախատեսված է օրական կամ հերթափոխային (այսուհետ՝ հերթափոխային) հաշվետու հանրագումարային տեղեկատվության գրանցման համար ու բացառում է այդ տեղեկատվության փոփոխությունը.

2) **ֆիսկալային հիշողության կուտակիչ**՝ մեկ կամ մի քանի հատուկ առանձնացված հիշողության միկրոսխեմաներ՝ ֆիսկալային տվյալների պահպանման համար.

3) **ֆիսկալային տվյալներ**՝ տեղեկատվություն, որը ենթակա է գրանցման ֆիսկալային հիշողության մեջ.

4) **ֆիսկալավորում**՝ ՀՂՄ-ի ֆիսկալային ռեժիմի միացում.

5) **հանրագումար**՝ գումար, որը ենթակա է գրանցման՝ փաստաթղթի ձևակերպումն ավարտելիս: Հանրագումարի մեծությունը չի կարող լինել բացասական.

6) **մասնավոր հանրագումար**՝ գումար, որը ձևավորում է ՀՂՄ-ն՝ փաստաթղթի ձևակերպման գործընթացում: Մասնավոր հանրագումարի մեծությունը չի կարող լինել բացասական.

7) **հերթափոխային վաճառքների հանրագումար**՝ հերթափոխի ընթացքում վաճառքների (ծառայությունների մատուցման) գրանցման ժամանակ ՀՂՄ-ով ձևակերպված փաստաթղթերի հանրագումարների գումար:

3. Հայաստանի Հանրապետությունում կիրառվող ՀՂՄ-ների ծրագիրը պետք է հնարավոր լինի կիրառել հայերենով և անգլերենով, իսկ 2014 թվականի հունվարի 1-ից՝ նաև ռուսերենով:

4. ՀՂՄ-ի միջոցով տպագրվող կտրոնի վրա գրանցվող և գնորդին տեսանելի ինդիկատորի վրա արտացոլվող տեղեկությունները պետք է լինեն հայերեն:

5. Հայաստանի Հանրապետությունում կիրառվող ՀՂՄ-ները պետք է բավարարեն հետևյալ ընդհանուր տեխնիկական պահանջները՝

1) ՀՂՄ-ն պետք է ունենա՝

ա. ֆիսկալային հիշողություն,

բ. օգտագործողի մուտքի անվանումը և գաղտնաբառ մուտքագրելու հնարավորություն (յուրաքանչյուրը՝ ոչ պակաս 4 կարգից),

գ. ինդիկատոր՝ պատասխանատու անձի համար (պատասխանատու անձ է համարվում այն անձը, ում վրա սահմանված կարգով դրված է ՀՂՄ-ի միջոցով հաշվարկներ իրականացնելու պարտականությունը),

դ. մակնշվածք, որում պետք է նշված լինեն ՀՂՄ-ի անվանումը, գործարանային համարը, թողարկման տարեթիվը, ՀՂՄ-ն արտադրողի ֆիրմային նշանը: Մակնշվածքի դրոշմման եղանակը պետք է ապահովի դրա պահպանվածությունը ՀՂՄ-ի ծառայության ամբողջ ժամկետի ընթացքում,

ե. չջնջվող հիշող սարք՝ նվազագույնը 128 ՄԲ ծավալով,

զ. 256 ՄԲ օպերատիվ հիշողության, 256 ՄԲ հիմնական հիշողության և մինչև 32 ԳԲ լրացուցիչ հիշողության քարտ տեղադրելու հնարավորություն,

է. SIM քարտով՝ 3G, 2G և GPRS կապուղիներով, Ethernet պորտով համացանցի միջոցով վերադաս հարկային մարմնի տեղեկատվական համակարգին միանալու հնարավորություն,

ը. SAM քարտով կողավորման հնարավորություն,

թ. PCI EMV 1 և 2 կարգերի համապատասխանության սերտիֆիկատ,

ժ. ծրագրային ապահովման փոփոխության և նոր մոդուլների ինտեգրման հնարավորություն.

2) ՀԴՄ-ն պետք է ապահովի՝

ա. ցանցային սնուցման անջատման դեպքում էներգաանկախ հիշողության մեջ դրամական գործարքների մասին տեղեկատվության, ինչպես նաև ծառայողական տեղեկատվության պահպանումը,

բ. թվաբանական գործողությունների կատարումը ներսարքված հաշվարկիչի կողմից՝ գումարում, հանում, բազմապատկում,

գ. աշխատանքի հիմնական ռեժիմների ծրագրավորումը,

դ. աշխատունակությունն էլեկտրացանցի (էլեկտրասնուցման) վթարային անջատումներից հետո,

ե. ՀԴՄ-ի անխափան աշխատանք՝ միջավայրի ջերմաստիճանի 0-40°C տիրույթում և մթնոլորտի 95 տոկոս (+25C պայմաններում) հարաբերական խոնավության դեպքում,

զ. վերադաս հարկային մարմնի կողմից հաստատված հատուկ ձևաչափով (արձանագրությամբ) տեղեկատվական համակարգի հետ աշխատանքը,

է. վերադաս հարկային մարմնի կողմից տրամադրված ալգորիթմով վիճակահանությանը մասնակցող թվերի գեներացումը,

ը. բանկային պլաստիկ քարտերի (չիպային և մագնիսական) միջոցով դրամական հաշվարկների իրականացումը,

թ. համապատասխան պարբերականությամբ՝ առնվազն յուրաքանչյուր 4 ժամը մեկ անգամ կապի հաստատումը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ հարկային մարմնի) տեղեկատվական համակարգի հետ՝ տվյալների փոխանակման նպատակով (կտրոնների տվյալների ուղարկումը և նոր տվյալների ստացումը հարկային մարմնի միասնական շտեմարանից),

ժ. հարկային մարմնի տեղեկատվական համակարգի հետ համապատասխան տվյալների (ամսաթիվը, ժամը և այլն) ներդաշնակեցումը (համապատասխանեցումը),

ժա. տվյալ և հաջորդ ամիսների վիճակահանության շահող թվերը վերադաս հարկային մարմնի տեղեկատվական համակարգից ստանալու և պահպանելու հնարավորություն՝ հետագայում դրանք ՀԴՄ-ի կտրոնի վրա արտատպելու նպատակով,

ժբ. հնարավորություն SAM քարտի միջոցով կոդավորելու տվյալները RSA ստանդարտին համապատասխան և պահպանելու այն հատուկ չջնջվող հիշող սարքի մեջ (նվազագույնը 128 ՄԲ).

3) ՀԴՄ-ն պետք է ապահովի աշխատանքի կասեցումը՝ սույն հավելվածով սահմանված դեպքերում.

4) ՀԴՄ-ի տեխնիկական հնարավորությունները պետք է ապահովեն՝

ա. բաժինների քանակը՝ 20-ից ոչ պակաս,

բ. պատասխանատու անձանց (օպերատորների) թիվը՝ 10-ից ոչ պակաս,

գ. մուտքագրվող և ինդիկացվող գումարների կարգայնությունը՝ 7-ից ոչ պակաս,

դ. դրամական հաշվարկիչների կարգայնությունը՝ 8-ից ոչ պակաս,

ե. ընդհանուր հանրագումարի հաշվարկիչների կարգայնությունը՝ 9-ից ոչ պակաս:

6. Ցանցային ՀԴՄ-ների միջոցով փոխանցվող տվյալները և դրանց փոխանցման ձևաչափը սահմանում է վերադաս հարկային մարմինը:

7. ՀԴՄ-ները պետք է բավարարեն ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջները:

8. ՀԴՄ սարքը քանդելու (պատյանը բացելու) դեպքում սարքը պետք է ավտոմատ զրոյացնի ֆիսկալային տվյալները՝ դրանք կոդավորված և այլ անձանց համար անհասանելի ձևով գրանցելով հատուկ ռեգիստրում (սարքում):

9. ՀԴՄ-ների միջոցով իրականացված դրամական հաշվարկների մասին տեղեկատվությունը հարկային մարմին է ուղարկվում ցանցային կապ ապահովող շարժական կամ ֆիքսված հեռախոսակապի միջոցով:

10. ՀԴՄ-ների միջոցով իրականացված դրամական հաշվարկների (կատարված գործարքների) մասին տեղեկատվությունը շարժական կապի միջոցով ուղարկվելու դեպքում

կիրառվող ՍԻՄ (SIM) քարտերը և տրամադրվող կապը պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին՝

1) քարտերը պետք է ունենան միմիայն տվյալների փոխանակման հնարավորություն (Data) և հասանելի լինեն միայն ՀՀ տարածքում (առանց ռոումինգի)։

2) քարտերը պետք է ստանան ստատիկ ԻՊ (IP) հասցեներ։

3) քարտերը պետք է ընդգրկված լինեն ներքին կորպորատիվ ցանցի մեջ, որոնց հասցեների բազմությունը (IP & MASK) պետք է նախապես համաձայնեցված լինի հարկային մարմնի տեղեկատվական և «ԱրՔա» համակարգերի հետ։

4) քարտերը պետք է ապահովեն հասանելիություն հարկային մարմնի ՀՂՄ-ների սպասարկման սերվերին և «ԱրՔա» համակարգի նախանշված սերվերներին (առավելագույնը 3 սերվեր)։

5) յուրաքանչյուր ՀՂՄ սերվերին դիմելիս՝ քարտը պետք է հանդես գա իր ֆիքսված IP-ով (բացառել կոնցենտրացիայի կամ NAT տեխնոլոգիայի կիրառումը)։

6) քարտեր տրամադրող օպերատորը պետք է տրամադրի նաև ներքին կորպորատիվ ցանցից երեքական IP հասցեներ՝ հարկային մարմնի տեղեկատվական համակարգի և «ԱրՔա» համակարգերի համար (6 IP հասցեներ)։

7) կապուղու թողունակությունը պետք է կազմի առնվազն 256 կբ/վ (այսուհետ՝ նվազագույն թողունակություն)։

8) օպերատորի համակցման թողունակությունը հարկային մարմնի և «ԱրՔա» համակարգերից յուրաքանչյուրին պետք է լինի նվազագույնը 2 մբ/վ։

11. ՀՂՄ-ների միջոցով իրականացված դրամական հաշվարկների մասին տեղեկատվությունը ֆիքսված կապի միջոցով իրականացվելու դեպքում պետք է պահպանվեն ՍԻՄ (SIM) քարտերի և տրամադրվող կապի համար սահմանված պահանջները՝ բացառությամբ նվազագույն թողունակության, որը պետք է կազմի 512 կբ/վ։

12. Ցանցային կապին վերաբերող՝ հարկային մարմնի տեղեկատվական համակարգի և «ԱրՔա» համակարգի հետ աշխատանքի համար անհրաժեշտ տվյալները (SIM քարտի համար, ֆիքսված հեռախոսահամար, IP հասցե և այլն) հարկային մարմնին և «ԱրՔա» համակարգին տրամադրվում են սպասարկման կենտրոնների կողմից։

13. ՀՂՄ-ի կտրոնի վրա պետք է տպագրված լինի հետևյալ տեղեկատվությունը (տվյալները)՝

1) ՀՂՄ-ի կտրոնի հերթական համարը (ԿՀ)՝ 8 նիշ։

2) ՀՂՄ կիրառողի անվանումը (կազմակերպության անվանումը և կազմակերպաիրավական տեսակի հապավումը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)։

3) օբյեկտի գործունեության հասցեն։

4) հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)։

5) ՀՂՄ-ի գրանցման համարը (ԳՀ)։

6) գնման (սպասարկման) ամսաթիվը (օրը, ամիսը, տարեթիվը)։

7) գնման (սպասարկման) ժամը։

8) սպասարկող բաժնի համարը։

9) ապրանքի (ծառայության) անվանումը։

10) գնվող ապրանքի քանակը և դրա չափման միավորը։

11) կիրառված գեղջի չափը (կիրառվելու դեպքում)։

12) գնման (սպասարկման) դիմաց վճարման ենթակա գումարները՝ ըստ բաժինների։

13) գնման (սպասարկման) ընդհանուր գումարը (ներառյալ ավելացված արժեքի հարկը)։

14) ավելացված արժեքի հարկի գումարը, եթե գործարքն իրականացնողը ԱԱՀ-ին վճարող է և գործարքը ենթակա է ԱԱՀ-ով հարկման։

15) պատասխանատու անձի (զանձապահի) համարը։

16) վիճակահանությանը մասնակից թիվը։

17) ֆիսկալավորման ռեժիմի նշանը (Ֆ)։

18) վիճակահանության շահող թիվը։

19) վիճակահանությանը մասնակցող ՀՂՄ-ի համարը։

14. Հայաստանի Հանրապետությունում կիրառվող ՀՂՄ-ները պետք է կատարեն հետևյալ գործողությունները՝

- 1) դրամական գումարների հաշվարկ.
- 2) մասնավոր հանրագումարների հաշվարկ.
- 3) վերադարձվող գումարի (մանրադրամի) հաշվարկ.
- 4) ընդհանուր հանրագումարների հաշվարկ.
- 5) վաճառքը (հաշվարկը)՝ կանխիկ դրամով.
- 6) ապրանքի (ՀՂՄ կտրոնի) վերադարձի գրանցում.
- 7) մինչև չեկի տպագրումը մուտքագրված տվյալների չեղյալ համարում.
- 8) գնման (սպասարկման) կտրոնի կրկնօրինակի տպագրում.
- 9) տոկոսային հավելավճարի (կամ գեղչի) հաշվարկ.
- 10) պատասխանատու անձի (գանձապահի) սխալի ուղղում՝ մինչև տեխնիկական կրիչին տեղեկատվության տպագրման համար ելքագրում.
- 11) հասույթների՝ ըստ հարկման ռեժիմների և (կամ) ավելացված արժեքի հարկով հարկման առանձնացում.
- 12) պլաստիկ քարտով գումարների հաշվեգրում:

15. ՀՂՄ-ները պետք է ապահովեն ըստ բաժինների և գանձապահների կողմից նախորդող առնվազն 7 օրվա ընթացքում իրականացրած գործարքների վերաբերյալ և ՀՂՄ-ի միջոցով տվյալ օրվա սկզբից մինչև հաշվետվության դուրսբերումն իրականացված գործարքների վերաբերյալ հաշվետվությունների դուրսբերումը, ինչպես նաև թղթային ժապավենի վրա դրանց տպագրումը:

16. ՀՂՄ-ները պետք է ապահովեն ապրանքների կամ ծառայությունների հաշվառման ծրագրերից (այդ թվում՝ հաշվապահական կամ կառավարչական) կամ համակարգչից հարկային մարմնի կողմից սահմանված ձևաչափով ապրանքների կամ ծառայությունների անվանումների, քանակների, դրամարկղ մուտքագրված գումարների, պլաստիկ քարտերի միջոցով հաշվեգրված գումարների, ՀՂՄ-ի միջոցով կազմվող հաշվետվությունների ներմուծման և արտածման հնարավորությունը:

17. Ֆիսկալային հիշողության մեջ գրանցվում է հետևյալ տեղեկատվությունը (ֆիսկալային տվյալներ)՝

Գրառման տեսակը	Ռեկվիզիտները	Ռեկվիզիտի կարգայնությունը (տասնորդական կարգերի)	Գրառումների քանակը
Համար	ՀՂՄ-ի գործարանային համարը		1
ՀՂՄ-ի ֆիսկալավորում	ՀՂՄ-ի գրանցման համարը	նվազագույնը՝ 8	1
	ՀՂՄ կիրառող հարկ վճարողի հաշվառման համարը	8	
	ֆիսկալավորման ամսաթիվը (օրը, ամիսը, տարեթիվը)	6	
	վերագրանցում անցկացնելու և ֆիսկալային հաշվետվություն ստանալու գաղտնաբառը	նվազագույնը՝ 5	
ՀՂՄ-ի վերագրանցում	ՀՂՄ-ի գրանցման համարը	նվազագույնը՝ 8	4
	կազմակերպության հարկ վճարողի հաշվառման համարը	նվազագույնը՝ 12	
	վերագրանցման ամսաթիվը (օրը, ամիսը, տարեթիվը)	6	
	հերթափոխի վերջին փակման համարը	4	

	վերագրանցում անցկացնելու և ֆիսկալային հաշվետվություն ստանալու գաղտնաբառը	նվազագույնը՝ 5	
Հերթափոխի փակում	հաշվետվության ամսաթիվը (օրը, ամիսը, տարեթիվը)	6	նվազագույնը՝ 9
	հերթափոխի փակման համար	4	
	հերթափոխի վաճառքների հանրագումարը	նվազագույնը՝ 9	
Ծառայողական տեղեկատվություն (պարտադիր է)	գրառումների հսկիչ գումարները	Որոշվում է արտադրողի կողմից:	
	ստորակետի դիրքը ֆիսկալային հաշվետվության մեջ գրանցվող հանրագումարների արժեքներում	ստորակետից հետո երկու նիշ	
	ծառայողական դասիչները, հատկանիշները (դրոշմները)	Որոշվում է արտադրողի կողմից:	
Կատարված գործարքների մասին տեղեկատվության ուղարկում հարկային մարմին			յուրաքանչյուր 4 ժամը մեկ անգամ, օգտագործողի հանձնարարությամբ

18. Ֆիսկալային հիշողությունը պետք է տեղակայված լինի ՀՂՄ-ի ընդհանուր պատյանի տակ, որը ծածկում է էներգաանկախ օպերատիվ հիշող սարքը (որում ձևավորվում են ֆիսկալային տվյալները), ֆիսկալային հաշվետվությունն ու վճարային փաստաթղթերը տպող սարքի կառավարման պրոցեսորը:

19. Ֆիսկալային հիշողությունը կամ առնվազն ֆիսկալային հիշողության կուտակիչը պետք է ունենա առանձին մոդուլի տեսք: Այդ մոդուլի կառուցվածքը պետք է ապահովի ֆիսկալային հիշողության մեջ տեղեկատվության փոփոխման և ֆիսկալային հիշողության կուտակիչի փոխարինման անհնարինությունը:

20. Ֆիսկալային հիշողության (ֆիսկալային հիշողության կուտակիչի) կառուցվածքը պետք է նախատեսի պաշտպանվածություն մեխանիկական, էլեկտրամագնիսական և այլ տեսակի ներգործություններից՝ ինչպես ՀՂՄ-ի աշխատանքի, այնպես էլ՝ տեխնիկական սպասարկման և վերանորոգման ընթացքում:

21. Ֆիսկալային հիշողության կուտակիչում գրանցված տեղեկատվությունը պետք է պահպանվի ոչ պակաս 6 տարվա ընթացքում՝ ՀՂՄ-ն ֆիսկալային ռեժիմի փոխադրելու պահից:

22. ՀՂՄ-ում պետք է նախատեսվի ֆիսկալային տվյալների պահպանվածությունն ստուգելու ռեժիմ:

23. ՀՂՄ-ում պետք է նախատեսված լինի վերանորոգող կազմակերպությունում տեխնիկական միջոցներով ֆիսկալային հիշողության պարունակության ընթերցման հնարավորություն՝ ՀՂՄ-ի խափանման դեպքում:

24. ՀՂՄ-ի ծրագրային ապահովումը, ՀՂՄ-ի տեխնիկական պահանջներին համապատասխան, գործողությունների լրիվ իրականացման հետ մեկտեղ, պետք է բացառի օգտագործողի կողմից առանց ՀՂՄ-ի ֆիսկալային տվյալների գրոյացման այն մասի փոփոխման հնարավորությունը, որը ղեկավարում է տեղեկատվության ընթերցումը և գրանցումը ֆիսկալային հիշողության մեջ, ֆիսկալային տվյալների ձևավորումն էներգաանկախ հիշող սարքում և ֆիսկալային ռեժիմի տարբերիչ հատկանիշի տպագրումը փաստաթղթերի վրա:

25. ՀՂՄ-ն պետք է կասեցնի գործողությունների կատարումը հետևյալ դեպքերում՝

- 1) կտրոնի տպագրման ժապավենի բացակայության.
 - 2) պատասխանատու անձի կողմից սխալ գործողություններ կատարելու.
 - 3) տպվող փաստաթղթի փչացմանը հանգեցնող իրավիճակների առաջացման.
 - 4) հիշողության գերլցման, անսարքության, ֆիսկալային հիշողության անջատման, ինչպես նաև աշխատանքի ժամանակ ՀՂՄ-ի ֆիսկալային ռեժիմում ֆիսկալային հիշողության չթույլատրված մուտքի.
 - 5) ոչ ճիշտ մուտքի անվանում և (կամ) գաղտնաբառ նշելու՝ դեպի ՀՂՄ-ի ֆիսկալային հիշողություն մուտքի փորձ կատարելիս: Այս դեպքում պետք է կասեցվեն բոլոր գործառնությունների կատարումը և մուտքի անվանման կամ գաղտնաբառի մուտքագրման ռեժիմից ելքը: Կասեցումը պետք է գործի մինչև ճիշտ մուտքի անվանման և (կամ) գաղտնաբառի մուտքագրման պահը.
 - 6) 36 ժամվա ընթացքում հարկային մարմին տեղեկատվություն չուղարկվելու.
 - 7) գործունեության տվյալ օբյեկտում ՀՂՄ-ի կիրառումը պարտադիր չլինելու հիմքով հարկային մարմնի կողմից ՀՂՄ-ի աշխատանքը կասեցնելու դեպքերում:
26. ՀՂՄ-ի գրանցող գործողությունների կասեցումը պետք է դադարեցվի կասեցում առաջացնող պատճառները վերացնելուց հետո և թույլատրվի հերթափոխային կամ կուտակային կամ ֆիսկալային հաշվետվությունների ստացումը:
27. ՀՂՄ-ն պետք է ապահովի ֆիսկալային հիշողության մեջ ազատ դաշտերի քանակի մասին հաղորդագրության ստացումը՝ հերթափոխային հաշվետվությունների գրառման համար: Ազատ դաշտերի 30-ից պակաս քանակի դեպքում հաղորդագրության ելքագրումը պարտադիր է և պետք է իրականացվի ավտոմատ կերպով՝ հերթափոխն ավարտելու կամ հերթափոխն սկսելու գործողությունների ժամանակ՝ ՀՂՄ-ի ձևակերպած փաստաթղթի վրա:
28. ՀՂՄ-ն պետք է ապահովի աշխատանքը ոչ ֆիսկալային և ֆիսկալային ռեժիմներում:
29. Ոչ ֆիսկալային ռեժիմը ՀՂՄ-ի գործելու ռեժիմն է մինչև ֆիսկալավորման անցկացումը: Ոչ ֆիսկալային ռեժիմում չօգտագործված են մնում ֆիսկալային հիշողության մեջ հերթափոխային հաշվետվությունների գրանցման և ֆիսկալային հաշվետվության ստացման գործառնյալները: Ոչ ֆիսկալային ռեժիմում հնարավոր է իրականացնել ՀՂՄ-ի մնացած բոլոր գործառնյալները, այդ թվում՝ նաև վաճառքների մասին տվյալների կուտակումը և փաստաթղթերի ձևավորումը՝ ՀՂՄ-ի մոդելի շահագործման փաստաթղթերին համապատասխան: Սպառողների (գնորդների) հետ հաշվարկներ կատարելիս՝ չի թույլատրվում ոչ ֆիսկալային ռեժիմում ՀՂՄ-ի օգտագործումը:
30. Ֆիսկալային ռեժիմը ՀՂՄ-ի գործողության այն ռեժիմն է, որն ապահովում է ֆիսկալային հաշվետվության մեջ ֆիսկալային տվյալների գրանցումը: Ֆիսկալային ռեժիմը պետք է ապահովի ՀՂՄ-ի աշխատանքը՝ շահագործման փաստաթղթերին համապատասխան: ՀՂՄ-ի ֆիսկալային ռեժիմում ձևակերպվող բոլոր փաստաթղթերում՝ ներառյալ կտրոններում, պետք է նշվի այն մասին, որ փաստաթուղթը տպագրվել է ֆիսկալային ռեժիմում:
31. Տեխնիկական պատճառներով ընթացիկ ամսաթիվը պետք է ուղղվի ՀՂՄ-ում գրանցված տեղեկատվությունը հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկատվության նույնականացման (սինքրոնիզացիայի) միջոցով:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավարի տեղակալ

Տ. Գևորգյան

Կ Ա Ր Գ ՀՍԿԻԶ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ

1. Օրենքով սահմանված կարգով հսկիչ-դրամարկղային մեքենայի (այսուհետ՝ ՀՂՄ) պարտադիր կիրառմամբ գործունեություն իրականացնող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը (այսուհետ՝ ՀՂՄ կիրառողները) Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի օգոստոսի 1-ի N 846-Ն որոշմամբ (այսուհետ՝ որոշում) սահմանված պահանջներին համապատասխանող ՀՂՄ-ները Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեում (այսուհետ՝ հարկային մարմին) գրանցելու և գրանցումից հանելու, ժամանակավոր օգտագործման համար ՀՂՄ-ն գրանցելու համար դիմումներ ներկայացնում են հարկային մարմնի հաշվետվություններ ներկայացնելու համակարգի (<https://file-online.taxservice.am>) միջոցով:

2. Հաշվետվություններ ներկայացնելու համակարգ մուտք գործելու համար ՀՂՄ կիրառողները, «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հավելվածին (Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները, հաշվարկները, այլ փաստաթղթեր և տեղեկություններ հարկային մարմին էլեկտրոնային եղանակով ներկայացնելու կարգին) համապատասխան, պետք է գրանցված լինեն հարկային մարմնում և համակարգ մուտք գործեն հարկային մարմնից ստացված մուտքի անվանմամբ և գրանցված գաղտնաբառով:

3. ՀՂՄ-ի կիրառումը ժամանակավորապես դադարեցվում է անմիջականորեն ՀՂՄ-ի միջոցով: Անսարքության պատճառով ՀՂՄ-ի միջոցով դրամական հաշվարկների կատարման անհնարինության դեպքում ՀՂՄ-ի կիրառումը ժամանակավորապես դադարեցվում է ՀՂՄ-ների սպասարկում և նորոգում իրականացնող ընկերությունից (այսուհետ՝ սպասարկման կենտրոն) ժամանակավոր օգտագործման համար ստացված ՀՂՄ-ն ՀՂՄ կիրառողի կողմից ժամանակավոր գրանցվելու դեպքում:

4. Նոր (չշահագործված) ՀՂՄ-ի կիրառումը, այդ թվում՝ կիրառվող ՀՂՄ-ի սույն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխանող ՀՂՄ-ով փոխարինումն իրականացվում է գործողությունների հետևյալ հաջորդականությամբ՝

1) նոր ՀՂՄ-ների ձեռքբերման համար «Հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվարկային հաշվին կատարվում է ՀՂՄ-ների պահանջվող քանակության դիմաց վճարում:

2) ներկայացվում է նոր ՀՂՄ կիրառելու մասին դիմում:

3) «Հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից բավարարված դիմումների հիման վրա կատարվում է ՀՂՄ-ի գրանցում:

4) գրանցված դիմումների հիման վրա «Հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը կարգաբերում է ՀՂՄ-ն, գրանցում այն հարկային մարմնի տեղեկատվական համակարգում և կազմակերպում դրա առաքումը:

5) Հարկ վճարողը պայմանագիր է կնքում սպասարկման կենտրոնի հետ, որն ապահովում է դրամական հաշվարկների մասին տեղեկությունների ուղարկման համար ցանցային կապի միջոցների առկայությունը:

6) հարկային մարմնի հաշվետվություններ ներկայացնելու համակարգի և անմիջականորեն ՀՂՄ-ի միջոցով իրականացվում է ՀՂՄ-ի ակտիվացումը:

5. Նոր (չշահագործված) ՀՂՄ կիրառելու մասին դիմումը ներկայացվում է էլեկտրոնային եղանակով: ՀՂՄ կիրառողը հարկային մարմնի հաշվետվություններ ներկայացնելու համակարգում լրացնում է ՀՂՄ-ների կիրառման մասին դիմում և ստորագրում է այն: Դիմումում լրացվում են հետևյալ տվյալները՝

1) ՀԴՄ-ի տեղադրման գործունեության օբյեկտը, որն ընտրվում է հարկային մարմնի տեղեկատվական բազայից: Գործունեության նոր օբյեկտի համար ՀԴՄ-ի կիրառումն նախատեսելու դեպքում հաշվետվություններ ներկայացնելու համակարգի միջոցով նախօրոք գրանցվում է գործունեության նոր օբյեկտ:

2) տվյալ օբյեկտում կիրառման համար անհրաժեշտ ՀԴՄ-ների թիվը:

3) ՀԴՄ-ի ձեռքբերման համար կատարված վճարման ամսաթիվը, վճարման հանձնարարականի կամ անդորրագրի համարը, վճարված գումարը:

6. Նոր (չշահագործված) ՀԴՄ-ները կիրառելու վերաբերյալ դիմումները քննարկվում են «Հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպության և հարկային տեսչության կողմից՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Դիմումը բավարարվում է, եթե դիմումում սխալներ չեն հայտնաբերվել, և ՀԴՄ կիրառողի կողմից վճարվել է դիմումում նշված հսկիչ-դրամարկղային մեքենաների արժեքը: ՀԴՄ-ն գրանցվում է առևտրի կամ բնակչությանը ծառայությունների մատուցման օբյեկտի համար:

7. Բավարարված դիմումի հիման վրա «Հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից մեկ աշխատանքային օրվա ընթացքում կարգաբերվում են ՀԴՄ կիրառողին տրամադրվելիք ՀԴՄ-ները և հարկային մարմնի տեղեկատվական համակարգի ՀԴՄ-ների ենթահամակարգում մուտքագրվում են ՀԴՄ-ի աշխատանքի հետ կապված անհրաժեշտ տվյալները կիրառողին տրամադրվելիք ՀԴՄ-ների վերաբերյալ տվյալները մուտքագրվելուց հետո: ՀԴՄ-ների ենթահամակարգում այդ ՀԴՄ-ներին շնորհվում է «ընթացիկ» կարգավիճակ:

8. Կարգաբերված ՀԴՄ-ները «Հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից՝ առաքող կազմակերպության միջոցով ուղարկվում են ՀԴՄ-ների կիրառողներին (սեփականատերերին):

9. Այլ անձանցից ձեռք բերված կամ վարձակալված ՀԴՄ-ները գրանցվում են հարկային մարմնում՝ ՀԴՄ-ն կիրառելու մասին դիմումի հիման վրա:

10. ՀԴՄ չի կարող գրանցվել այն օբյեկտներում, որոնք բնակչությանը ծառայությունների մատուցման կամ «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված առևտրի օբյեկտ չեն հանդիսանում:

11. ՀԴՄ կիրառողի կողմից ՀԴՄ-ն հանվում է գրանցումից հարկային մարմնի հաշվետվություններ ներկայացնելու համակարգում ՀԴՄ-ն գրանցումից հանելու մասին դիմում ներկայացնելու և համապատասխան լիազորություն ունեցող անձի կողմից անմիջականորեն ՀԴՄ սարքից գրանցումից հանելու հանձնարարական տալով: Հաշվետվություններ ներկայացնելու համակարգի միջոցով դիմումն անմիջականորեն ՀԴՄ-ից ստացված հանձնարարականով հաստատվելու դեպքում համակարգը ՀԴՄ-ն ավտոմատ հանում է գրանցումից:

12. ՀԴՄ-ն հանվում է գրանցումից՝

1) տվյալ օբյեկտում ՀԴՄ-ի պարտադիր կիրառմամբ գործունեությունը դադարեցնելու:

2) տվյալ օբյեկտում գործունեությունը դադարեցնելու (այդ թվում՝ կազմակերպության լուծարման, անհատ ձեռնարկատիրոջ կողմից իր գործունեության դադարեցման, անհատ ձեռնարկատիրոջ մահվան դեպքերում):

3) վերակազմակերպվելու արդյունքում անմիջականորեն տվյալ կազմակերպության անվանմամբ ՀԴՄ-ի շահագործումը դադարեցվելու դեպքերում:

13. Առևտրի այն օբյեկտներում և ծառայությունների մատուցման այն վայրերում, որտեղ ՀԴՄ-ի կիրառումն օրենքով պարտադիր չէ, կիրառվող ՀԴՄ-ները գրանցումից հանվում են հարկային մարմնի նախաձեռնությամբ: Սույն կետում նշված օբյեկտներում ՀԴՄ-ի աշխատանքը կասեցվում է հարկային մարմնի կողմից՝ մինչև ՀԴՄ կիրառողի կողմից ՀԴՄ-ն գրանցումից հանվելը:

14. ՀԴՄ-ն կառավարվում և օգտագործվում է ՀԴՄ կիրառողի կողմից նշանակված (ընտրված) գլխավոր ադմինիստրատորի, ադմինիստրատորի և գանձապահի կողմից:

15. Գլխավոր ադմինիստրատորի իրավասությամբ օժտվում է անհատ ձեռնարկատերը կամ անհատ ձեռնարկատիրոջ կամ կազմակերպության նշանակված անձը, ով ՀԴՄ-ի ծրագրի միջոցով կառավարում և կարգաբերում է այն: ՀԴՄ-ի ծրագրում որպես օգտվող գլխավոր

ադմինիստրատորը չի կարող ապաստիվացվել (գլխավոր ադմինիստրատորի իրավասությունները չեն կարող դադարեցվել): Գլխավոր ադմինիստրատորի իրավասություններն են՝ ՀՂՄ-ի ակտիվացումը, գրանցումից հանումը, ՀՂՄ-ի աշխատանքի ժամանակավոր դադարեցումը, ապրանքների (ծառայությունների) կառավարումը, օգտվողի կառավարումը, ՀՂՄ-ի էջազլխի և էջատակի խմբագրումը, հարկային մարմնի տեղեկատվական համակարգ տվյալների ուղարկումը, ֆիսկալ հաշվետվության տպագրումը, ՀՂՄ-ի կտրոնով կատարվող գործարքի առավելագույն գումարի սահմանումը:

16. Ադմինիստրատորը ՀՂՄ օգտագործող է, ով ծրագրի միջոցով կառավարում և կարգաբերում է ՀՂՄ-ն: Ադմինիստրատորի իրավասությունները ծրագրի միջոցով ակտիվացվում և ապաստիվացվում են գլխավոր ադմինիստրատորի կողմից: Ադմինիստրատորի իրավասություններն են՝ ՀՂՄ-ի աշխատանքի կասեցումը, ապրանքների (ծառայությունների) կառավարումը, օգտվողի կառավարումը, ՀՂՄ-ի էջազլխի և էջատակի խմբագրումը, հարկային մարմնի տեղեկատվական համակարգ տվյալների ուղարկումը, ֆիսկալ հաշվետվության տպագրումը, ՀՂՄ-ի կտրոնի առավելագույն գումարի սահմանումը: Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ հայեցողությամբ գլխավոր ադմինիստրատորի, ադմինիստրատորի, ինչպես նաև գանձապահի իրավասություններով կարող է օժտվել ցանկացած անձ (աշխատող, աշխատողներ):

17. Գանձապահը ՀՂՄ օգտագործող է, ով կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտի միջոցով իրականացված գործարքներին վերաբերող՝ սահմանված տեղեկությունները և հաշվարկի կատարման համար անհրաժեշտ տվյալները մուտքագրում է ՀՂՄ, տպում է ՀՂՄ կտրոնը և այն տրամադրում ապրանքներ ձեռքբերողին կամ ծառայություններ ստացողին: Գանձապահը ՀՂՄ-ի կիրառմամբ իրականացնում է հետևյալ գործառնությունները՝ մուտքագրում կամ ելքագրում է կանխիկ դրամը, ՀՂՄ գումարը կամ գնվող ապրանքի կամ ստացած ծառայության անվանումը կամ ծածկագիրը մուտքագրելու միջոցով տպում և ապրանքներ ձեռքբերողին կամ ծառայություններ ստացողին է տրամադրում ՀՂՄ կտրոնը, գնորդի պահանջով տրամադրում է կտրոնի կրկնօրինակը, մուտքագրում է ՀՂՄ կտրոնի (ապրանքի) վերադարձը, հարկային մարմնի տեղեկատվական համակարգ է ուղարկում սահմանված տեղեկությունները:

18. ՀՂՄ կիրառողները ՀՂՄ-ն համապատասխան իրավասությամբ օգտագործելու համար մուտքագրում են իրենց մուտքի անվանումը և գաղտնաբառը:

19. Ֆիսկալային հաշվետվությունը պետք է պարունակի հետևյալ ռեկվիզիտները՝

- 1) կազմակերպության անվանումը.
- 2) ֆիսկալային հաշվետվության հատկանիշը.
- 3) փաստաթղթի համընդգրկող կարգային համարը.
- 4) հաշվետվության ստացման ամսաթիվը (օրը, ամիսը, տարեթիվը).
- 5) հաշվետվության ստացման ժամանակը՝ ՀՂՄ-ի տեխնիկական պահանջներին համապատասխան.
- 6) ժամանակամիջոցը, որի համար ձևավորվում է հաշվետվությունը.
- 7) ՀՂՄ-ի գրանցման համարը.
- 8) ՀՂՄ-ի անցկացրած բոլոր վերագրանցումների ռեկվիզիտները (բացի գաղտնաբառից).
- 9) տվյալ ժամանակամիջոցում հերթափոխային վաճառքների բոլոր հանրագումարները՝ կոնկրետ հանրագումարի գրանցման թվականի և հերթափոխի ավարտման համարի նշմամբ.
- 10) տվյալ ժամանակամիջոցում վաճառքների գումարային հանրագումարը:

20. ՀՂՄ կիրառողներն ապրանքներ վաճառելիս կամ ծառայություններ մատուցելիս կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով դրամական հաշվարկները (այսուհետ՝ հաշվարկներ) իրականացնում են սույն որոշմամբ սահմանված պահանջները բավարարող ՀՂՄ-ի միջոցով, եթե այդ օրենքով ՀՂՄ-ների կիրառումը պարտադիր է:

21. ՀՂՄ կիրառողները հաշվարկները կատարում են միայն հարկային մարմնում (այսուհետ՝ հարկային տեսչություն)՝ սույն կանոններով սահմանված կարգով գրանցված ՀՂՄ-ների միջոցով:

22. ՀՂՄ-ի շահագործման կանոնների և ՀՂՄ-ի միջոցով հասույթների հաշվառման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է հարկային մարմինը:

23. Գանձապահը պարտավոր է՝

1) հաշվիչ սարքի միջոցով մուտքագրել ՀՂՄ կտրոնի վրա տպագրման համար անհրաժեշտ տվյալները, որոշել գնման ընդհանուր գումարը և տեղեկացնել գնորդին կամ պատվիրատուին.

2) ապրանքները հանձնելու պահին՝ գնորդից կամ մատուցված ծառայությունների դիմաց՝ պատվիրատուից գումար ստանալու դեպքում, իսկ կանխավճարների դեպքում՝ գումարը մուտքագրելուց անմիջապես հետո տրամադրել ՀՂՄ կտրոն.

3) տեղեկացնել գնորդին, եթե ՀՂՄ կտրոնը շահում է պարունակում:

24. Մինչև գնման կտրոնի փակումը (տպագրումը) սահմանված տեղեկությունները, հաշվարկի կատարման համար անհրաժեշտ տվյալները ՀՂՄ մուտքագրելու ժամանակ գանձապահի կողմից թույլ տրված սխալների հայտնաբերման, ապրանքի գնումից գնորդի լրիվ կամ մասնակի հրաժարվելու դեպքում՝ ՀՂՄ-ի միջոցով կատարված հաշվարկները չեղյալ են համարում: Չեղյալ համարված մուտքագրումների հետ կապված գումարները չեն ներառվում հասույթի գումարի մեջ: Տվյալների և տեղեկությունների մուտքագրումները չեղյալ են համարվում ՀՂՄ-ի համապատասխան ստեղծի (ծրագրի համապատասխան ֆունկցիայի) միջոցով:

25. ՀՂՄ կտրոնի փակումից (տպագրումից) հետո թույլ տրված սխալների բացահայտման, ապրանքի գնումից գնորդի կամ ծառայություն ստացողի լրիվ կամ մասնակի հրաժարվելու, գնված ապրանքի փոխարեն այլ ապրանք գնելու դեպքերում ՀՂՄ կտրոնը և գնման գործարքը չեղյալ կարող են համարվել միայն ՀՂՄ կտրոնի (ապրանքի վերադարձ, ծառայությունից հրաժարում) վերադարձ ձևակերպելու միջոցով: ՀՂՄ կտրոնի վերադարձը ՀՂՄ-ում արձանագրվում է համապատասխան ստեղծի (ծրագրի համապատասխան ֆունկցիայի) միջոցով:

26. ՀՂՄ-ի կտրոնի վերադարձ կարող է ձևակերպվել միայն ՀՂՄ-ի կտրոնի փաստացի վերադարձի դեպքում: Վերադարձի ձևակերպման ժամանակ տպվում է վերադարձի ՀՂՄ-ի կտրոն: ՀՂՄ-ի վերադարձված կտրոնի վրա կատարվում է «Վերադարձ» նշումը և վերադարձի կտրոնի հետ պահպանվում է տպելու օրվան հաջորդող երեք տարիների ընթացքում: Համապատասխան պահանջի դեպքում ՀՂՄ-ի վերադարձված կտրոնը և վերադարձի կտրոնը ներկայացվում են ստուգում կամ ուսումնասիրություն (բացառությամբ հարկային մարմնի կողմից իրականացվող կամերալ ուսումնասիրությունների) անցկացնող անձանց: Նշված ժամկետում ՀՂՄ կտրոնը չպահպանվելու կամ ստուգում կամ ուսումնասիրություն իրականացնող անձանց չներկայացվելու դեպքերում՝ ՀՂՄ կտրոնի «Վերադարձ» ձևակերպելու միջոցով իրացման (հարկվող) շրջանառության նվազեցումը համարվում է չհիմնավորված:

27. Գանձապահը հերթափոխի կամ աշխատանքային օրվա ավարտից հետո ՀՂՄ-ից դուրս է բերում հաշվետվության համարը, ընթացիկ հսկիչ ժապավենի համարը, գնումների թիվը, գնումների գումարը, վերադարձի թիվը, վերադարձի գումարը, հերթափոխային հասույթը, պատասխանատու անձի մոտ առկա կանխիկ գումարը, ինչպես նաև պատասխանատու անձի հերթափոխային հաշվետվությունը, որը հանդիսանում է սկզբնական փաստաթուղթ հասույթը հաշվառելու համար: Վերջինս պահպանվում է կազմակերպությունում՝ տպվելու օրվանից 3 տարվա ընթացքում:

28. Գանձապահի հերթափոխային հաշվետվությունը տպվում է հսկիչ ժապավենի վրա: Այն կարող է ստացվել՝ ինչպես ընդլայնված՝ կտրոնների համարները նշելով, այնպես էլ՝ համառոտ՝ գնումների ընդհանուր հանրագումարով:

29. ՀՂՄ-ի կտրոններով կազմակերպվում է վիճակահանություն: ՀՂՄ-ին հարկային մարմնի տեղեկատվական բազայից ուղարկվում է շահող համարը, որը գրանցվում է ՀՂՄ-ի հիշողությունում: ՀՂՄ-ի ծրագիրը յուրաքանչյուր գնման դեպքում, մինչև ՀՂՄ կտրոնի տպագրումը, գեներացնում է թիվ, որը համեմատվում է շահումի թվի հետ: Սահմանված միջերի թվին համապատասխան գեներացված թիվը շահումի թվերին համընկնելու դեպքում ՀՂՄ կտրոնի վրա տպագրվում է տեղեկություն շահելու մասին՝ շահումի տեսակի նշումով: Գնումների ժամանակ ՀՂՄ-ի ծրագիրը թիվը գեներացնում է որոշակի ալգորիթմով: Թվի գեներացումը կատարվում է որոշակի փոփոխական մեծությունների, գործարքի արժեքի և

գործարքի իրականացման պահի (րոպե, ժամ, օր, ամիս, տարի) հիման վրա: Թվի գեներացման ավգորիթը թույլ է տալիս ստուգել, թե տվյալ թիվը որ ՀՂՄ-ում է գեներացվել և որ պահին:

30. ՀՂՄ-ի աշխատանքի ընթացքում անսարքություն հայտնաբերելիս՝ պատասխանատու անձը պարտավոր է անջատել ՀՂՄ-ն և դրա մասին անհապաղ տեղեկացնել իրավասու՝ ղեկավար անձին: Իրավասու ղեկավար անձը տեխնիկական սպասարկում և նորոգում իրականացնող իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը (այսուհետ՝ սպասարկման կենտրոն) տեղեկացնում է ՀՂՄ-ի անսարքության մասին: Մինչև ՀՂՄ-ի նորոգումը կամ այն նորով փոխարինելը՝ ՀՂՄ-ների պարտադիր կիրառմամբ գործարքներ կատարելն արգելվում է:

31. ՀՂՄ կիրառողի հայտի հիման վրա սպասարկման կենտրոնն ստուգում է անսարք ՀՂՄ-ն և անհրաժեշտության դեպքում ՀՂՄ կիրառող կազմակերպության ղեկավարի կամ պատասխանատու անձի հետ կազմում է ՀՂՄ-ն անսարք լինելու վերաբերյալ ակտ: Այդպիսի պահանջ հայտնվելու դեպքում սպասարկման կենտրոնը ՀՂՄ կիրառողին պատկանող ՀՂՄ-ի վերանորոգման աշխատանքների ամբողջ ժամանակահատվածի ընթացքում, ՀՂՄ կիրառողի պահանջով, օգտագործման համար վերջինիս ժամանակավոր ՀՂՄ է տրամադրում:

32. Հարկային մարմնի տեղեկատվական համակարգում ժամանակավոր օգտագործման համար տրամադրված ՀՂՄ-ի գրանցման դիմումում լրացվում են դիմումի ձևով նախատեսված բոլոր տվյալները:

33. Ժամանակավոր օգտագործման համար ստացված ՀՂՄ-ի գրանցման մասին ՀՂՄ կիրառողի կողմից ներկայացված դիմումի հիման վրա ՀՂՄ-ն հարկային մարմնում ժամանակավոր գրանցվում է ՀՂՄ կիրառողի անունով: Ժամանակավոր ՀՂՄ-ի միջոցով իրականացված գործարքները գրանցվում են ՀՂՄ կիրառողի անունով, իսկ դրա միջոցով իրականացված գործարքների ֆիսկալ հասույթը ներառվում է ՀՂՄ կիրառողի ընդհանուր ֆիսկալ հասույթում:

34. Վերանորոգումից վերադարձված ՀՂՄ-ն վերագրանցվում է հարկային մարմնում ժամանակավոր օգտագործման ՀՂՄ-ի միջոցով իրականացված գործարքների մասին տեղեկատվությունը հարկային մարմին ուղարկելուց (տվյալների բազաների սինքրոնիզացումից) անմիջապես հետո: Վերանորոգումից վերադարձված ՀՂՄ-ն վերագրանցելու պահից ժամանակավոր օգտագործման համար ստացված ՀՂՄ-ն հանվում է գրանցումից:

35. ՀՂՄ օգտագործող անձին արգելվում է կողմնակի անձանց թույլատրել աշխատել ՀՂՄ-ի հետ՝ բացառությամբ՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ստուգում իրականացնող տեսուչների, իսկ անսարքության դեպքում՝ նաև տեխնիկական սպասարկում իրականացնող մասնագետների:

36. ՀՂՄ-ն կարող է սույն կետով սահմանված գործողությունների շրջանակներում օգտագործվել հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ստուգում կամ ուսումնասիրություն (հսկիչ գնում) իրականացնող տեսուչի կողմից: Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ստուգում կամ ուսումնասիրություն (հսկիչ գնում) իրականացնող տեսուչն իրավասու է տեղեկություն ուղարկել հարկային մարմնի տեղեկատվական համակարգ և տպել ֆիսկալ հաշվետվություն: Հարկային մարմնի տեղեկատվական համակարգ տեղեկություն ուղարկելու և ֆիսկալ հաշվետվություն տպելու համար հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ստուգում կամ ուսումնասիրություն (հսկիչ գնում) իրականացնող տեսուչը ՀՂՄ-ի համապատասխան գործառնության միջոցով մուտքագրում է ստուգման կամ ուսումնասիրության հանձնարարագրի համարը: Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ստուգում կամ ուսումնասիրություն (հսկիչ գնում) իրականացնող տեսուչի կողմից ծառայողական վկայականի և ստուգման հանձնարարականի ներկայացումը հիմք է ՀՂՄ ստուգման հանձնարարագրի համարը մուտքագրելու համար:

37. ՀՂՄ-ի կիրառման, ՀՂՄ-ի շահագործման կանոնների պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով հարկային մարմինը հսկիչ գնումներ կատարում է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

38. Հարկային մարմնի կողմից իրականացվող հսկիչ գնման (գնումների) արդյունքում, հսկիչ գնում իրականացրած հարկային մարմնի պաշտոնատար անձի կողմից հանձնարարագիրը ներկայացվելուց և արձանագրությունը կազմվելուց հետո, բայց ոչ ուշ, քան հսկիչ գնմամբ ձեռք բերված ապրանքների վերադարձման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետները, գանձապահին է վերադարձվում հսկիչ գնմամբ (գնումներով) ձեռք բերված ապրանքը՝ պայմանով, որ գնումից հետո չեն փոփոխվել դրա ապրանքային տեսքը և սպառողական հատկանիշները: Եթե հսկիչ գնման ժամանակ տրամադրվել է ՀՂՄ կտրոն, ապա ապրանքի վերադարձը կատարվում է ՀՂՄ-ի կտրոնի հետ միասին: Կազմակերպության պատասխանատու անձն ընդունում է վերադարձման ենթակա ապրանքը (ապրանքները), վերադարձնում է ստացված գումարը և ՀՂՄ-ի միջոցով սույն կարգին համապատասխան ձևակերպում է ապրանքի վերադարձը:

39. Վաճառված ապրանքի հետընդունման ակտն ստորագրում են հսկիչ գնում կատարած անձը (անձինք) և գանձապահը: Հետընդունման ակտի մեկ օրինակը հսկիչ գնման արձանագրության մեկ օրինակի հետ հանձնվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին, որն առարկություններ ունենալու դեպքում դրանք ներկայացնում է գրավոր: Եթե վերադարձվում է ՀՂՄ-ի կտրոնով վաճառված ապրանքների մի մասը, ապա կատարվում է բոլոր ապրանքների և գումարի հետվերադարձ, այնուհետև Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հետընդունման ոչ ենթակա ապրանքների համար հսկիչ գնում կատարողի կողմից կատարվում է վճարում, որի համար ՀՂՄ-ի միջոցով տպվում և տրամադրվում է նոր ՀՂՄ կտրոն:

40. Օրենքով սահմանված պատասխանատվություն կիրառելու առումով՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտում է դիտվում՝

1) որոշման N 1 հավելվածով սահմանված՝ ՀՂՄ կտրոնի վրա տպագրման ենթակա որևէ տեղեկատվության (տվյալի) բացակայությունը (բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի) կամ անընթեռնելիությունը (անգեյն աչքով կտրոնի վրա արտացոլված տվյալներն ընթերցելու անհնարինությունը):

2) ՀՂՄ-ի կտրոնի չտրամադրումը, այդ թվում՝ ստացված կանխավճարի դիմաց:

3) գնված ապրանքի կամ ստացված ծառայության արժեքի կամ քանակի չմուտքագրումը հսկիչ-դրամարկղային մեքենա:

4) գնված ապրանքի կամ ստացված ծառայության արժեքից ցածր արժեքի կամ քանակից փոքր քանակի մուտքագրումը ՀՂՄ:

5) 2014 թվականի հունվարի 1-ից՝ ՀՂՄ-ի կտրոնի վրա գնված ապրանքից կամ ստացված ծառայությունից տարբերվող ապրանքի կամ ծառայության անվանման տպագրումը:

41. Օրենքով սահմանված պատասխանատվություն կիրառելու առումով՝ ՀՂՄ-ների շահագործման կանոնների խախտում չեն համարվում՝

1) գնորդի կողմից ՀՂՄ-ի կտրոնը չվերցնելու արդյունքում դրա փաստացի չհանձնումը գնորդին, եթե ՀՂՄ-ի կտրոնը փաստացի տպագրվել է, և դրանում նշված գումարը ներառվել է ֆիսկալ հասույթում:

2) մինչև 2014 թվականի հունվարի 1-ը՝ որոշման N 1 հավելվածի 13-րդ կետի 9-րդ և 10-րդ ենթակետերում նշված տվյալների բացակայությունը: Անկախ սույն կետում նշվածից՝ մինչև 2014 թվականի հունվարի 1-ը ՀՂՄ կտրոնում որոշման N 1 հավելվածի 13-րդ կետի 9-րդ և 10-րդ ենթակետերով սահմանված տվյալների նշումը և այդ տվյալներից տարբերվող տվյալներով գործարքի իրականացումը կոփտվի որպես հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտում:

3) տվյալ առևտրի օբյեկտում՝ հարկային մարմնում ՀՂՄ գրանցված լինելու դեպքում առանց ՀՂՄ-ի կիրառման գործունեության իրականացումը: Սույն ենթակետում նշված դեպքում գործունեության իրականացումը դիտվում է առանց ՀՂՄ կիրառելու գործունեության իրականացում: